մէջ ընում է Նախիջեւան և Գողթան, Վասպուրականի մասն, որ բոլորովին անյարմար է ըստ տեղւոյն դրութեան։

Այս մասին ես գրել եմ Նախիջեւանայ գաւառացուցի մէջ մանրամասն տեղեկութեամբք։

ՄԱՏԹԷՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ ՊԱՏՄԻՉ

952 ԹՈՒԷՆ ց1136 ԱՄՆ

(ՏՊԵԱԼ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ Ի ՀԱՅՈՑ ՏՊԱՐԱՆԻ)

173. *Յօդ. ՉԸ. Մատն Բ. գրէ։ Դարձեալ ի թուականութեանս Հայոց ՇԺԴ* (1064-1065) *զօրաժողով արար թագաւորն Պարսից Ալփասլան Սուլթանն . . . և որպէս գազան արիւնարբութեամբ գայրացեալ՝ գայր, հասանէր ի Հայաստան աշխարհս, և անհամար բազմութեամբ զօրօք մտանէր յաշխարհս Աղուանից, և մատնեաց զնոսա ի սուր և ի գերութիւն։ Եւ անթիւ և անհամար արար զանցումն Քրիստոնէից, որ ոչ ոք կարէ պատմել զկատարած դառնաշունչ աղէտիցն հաւատացելոց Քրիստոսի. վասն զի՝ դառն ճաշակմամբ ընկալան զմահն ի կատաղեալ չարաթոյն ազգէն Թուրքաց, և ի բազմութենէ զօրացն ծածկեալ եղեւ ամենայն երեսք դաշտացն, և փակեաց զամենայն տեղի փախստեան։ Եւ ահա աստ կատարեցան բանք Փրկչին՝ որ ասաց. «Վա՜յ իցէ յղեաց և սնուցեալ յաւուրսն յայնոսիկ". վասն զի՝ բազում Քահանայք և Կրօնաւորք և Հայրապետք և փառաւոր Իշխանք ընկալան զմահ դառնաշունչ, և եղէն կերակուր գազանաց և թռչնոց։ Եւ զկնի այսչափ բարկութեանս առաքեաց Սուլթանն առ թագաւորն Աղուանից ի Կիւրիկէ, և խնդրեաց զդուստրն նորա ի կնութիւն, որ յաղագս ահին տուեալ եղեւ. և արար Սուլթանն ընդ նմա սէր և խաղաղութիւն յաւիտեան։ Եւ զթագաւորն Աղուանից զԿորիկէ զորդի Դաւթի Անհողինի յուղարկեաց մեծաւ պատուով ի քաղաքն իւր Լօռի բազում ընծայիւք"։*